ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ապրիլի 2025 թվականի № -Ա

ԲԱՑԱՌԱՊԵՍ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №471-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46.1-ին կետը, №3 հավելվածի 5-րդ կետը և հաշվի առնելով «ՇԻՐԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի մարտի 10-ի գրությունը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «ՇԻՐԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շիրառ» արևային էլեկտրակայանում բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №471-Ա որոշումը՝ այդ որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի արտադրության ԼԷ№0759 լիցենզիայով ամրագրված՝ «Շիրառ» արևային էլեկտրակայանի կառուցման պարտավորության կատարման հիմքով:

2. Սահմանել, որ «ՇԻՐԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շիրառ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիան (հզորությունը) կարող է արտադրել բացառապես սեփական կարիքների համար:

3. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2023 թվականի դեկտեմբերի 1-ի №9862/07 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն Հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ապրիլի 2025թ.